

մական ընկերութիւն մը ունի՝ յիշատակարանաց պահպանութեանն համար, երաժշտութեան ճեմարան մը, գիտութեանց և արուեստից ընկերութիւն, բուսաբանութեան ընկերութիւն, ևն։

Ճարտարութիւնը շատ առաջ գացած է ի իշ. բամբակ, կտաւ և չուխայ մանելու 150 գործարան կայ, 60 գործարան մանուած կտաւի, 80 գործարան պաստառի, նոր զգեստուց ասպնեգործք, գորգի, գլխարկի և ձեռնոցի արուեստանոցներ, 17 գործարան

դանդելայի և դիւլի. Ճարտարութիւն երկաթի, մեքենայից, բնալուծական նիւթոց, սպիտակագեղի՝, ճակնդեղի շաքարի. զտարաններ, գարեջրի գործատուններ, շաքարի զտարաններ, ներկանոցներ, կաշւոյ ու յախճապակոյ գործարաններ. նոյնպէս Գոլջա ըսուած կաղամբէն եղ հանելու գործարաններ, և այլն։ Բայց յիշի Ճարտարութիւն ունենալով իշ, վաճառականութիւնն ալ խիստ բանուկ ու գործունեայ է։

1 ՏՃ. Իսթի-պէճ։

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

ՀՈՎՈՒԱԿԱՆԱՅՆ

ՊՈԲԼԻՈՍԻ ՎԻՐԳԻԼԵԱՅ ՄԱՐՈՎՆԻ

ԾԱՂԿԱՔԱՂ ԱՌԱՋԻՆ

ՏԻՏԻՐՈՍ

Ի բաշխել Ոկտաիանոսի կայսեր զանդաստանս Կրեմոնայ եւ Մանտուայ հինաւորաց զօրականին ի մրցանակ, կորոյս ընդ այլս եւ Վիրգիլ մանտուացի զածու իւր փոքրիկ։ Բայց ընծայականաւ Ասինեայ Պուլլիոնի՝ որ յայնժամ ջոկատիւ փոքու ի գաւառի անդ գեղերէր՝ յանձնեալ Մեկենասայ, եւ ի ձեռն նորա գտեալ շնորհս առաջի կայսեր, ստացաւ զոր կորուսեալն էր։ Վասն որոյ զգովութիւնս Ոկտաիանոսի եւ զՀոգմայ, զբախտ իւր եւ զաղէտս մանտուացւոց յերգս յայս նուագէ Վիրգիլ, Տիտիրեայ զիւրն ի սմա տալով բերել զգէմս, եւ Մեկիթէի զմանտուացւոցն։

ՄԵԼԻԲԵՈՍ ԵՒ ՏԻՏԻՐՈՍ

Մեկիթէոս

Տիտիրէ, դու ընդ յարկաւ լայնատարած բազմեալ փիճւոյդ,
Ի զմուսայդ վայրենի յեղէգն ի նուրբ յեղանակես.
Օհայրենի մեք ըզսահման թողաք եւ զանդըս ցանկալիս,
Ո՛րք՝ փախըստականք ի հայրենեաց, դու Տիտիրէ՝
Հանգուցեալ ընդ հովանեալ՝ ըզգեղանւոյն Լճարիլէայ
Ուռոց անտառիդ ուսուցանես կըրկնել զանուն։

Տիտիբոս

Բստուած , Մեղիբէէ , ետ մեզ զանդորր զայս կենցաղ .
Օ ի ինձ միշտ լիցի նա ինքն աստուած , եւ ստէպ ամիկ մատուղ
Բզնորայն թացցէ բազին ի փարսխէ աստի մերմէ .
10 Եւ իմոցս այսոցիկ թոյլ արջառոց ետ թափառել ,
Եւ գեղջուկ եղեգամբ զոր ինչ կամիմքս նըւագել :

Մեղիբէնս

Ոչ խանդամ ընդ բաղդ քոյին , նա աւանիկ զարմանք են ինձ ,
Ուր այսքան յուզի աղմուկ ընդ արտորէքս առ հասարակ .
Օ այծերամն ահա ընդ իս ածեմ տըխուր ճեպով ի բաց .
Եւ զայս իսկ , Տիտիբէ , հազիւ բերեմ մազապուր այծ ,
Որ այժմիկ լուծեալ զերկունս՝ եթող , աւանդ , ի մերկ ժայռին
Երկուորեակս ի յոյս հօտին ընդ տընկախիտ արքակաղնեօք :
Օ աղէտըս զայսոսիկ , եթէ չէին մեզ միտք ահեակ ,
Յիշեմ զի գուժեցին յաճախ կաղնիք ամպահարեալք ,
20 Եւ ստէպ ի փապարեալ սղոցւոյն ձախող գուժեաց ազուա .
Եւլ ասա մեզ , Տիտիբէ , ո՞րք աստուածն այն քո իցէ :

Տիտիբոս

Բգբաղաբըն , զոր հըռովմ յորջորջեն , ո՞վ Մեղիբէէ ,
Բնմիտըս կարծէի մերումն այսմիկ հանգունատիպ ,
Յոր հովիւքս ըզմատաղ երկունս յաճախ ածեմք խաշանց .
Իբր հանգէտ գամիւռն զըսկունդ , եւ մարցըն զուրս գիտէի ,
Իբր ըզջոջ ընդ մանունց սովոր էի համեմատել .
Եւլ այնչափ ի մէջ այլոց նա քաղաքաց գլուխ ամբառնայ ,
Որչափ նոճք ի մէջ ճապուկ ուռեաց սովոր են ամբառնալ :

Մեղիբէնս

Եւ ուստի՞ այդքան քեզ հարկ հասեալ ըզհըռովմ տեսանելոյ :

Տիտիբոս

30 Յըղձից ազատութեան . այն որ թէպէտ եւ անագան ,
Սակայն հաշտ ի պարապորդս յիս ակնարկեաց , մինչ ըսպիտակք
Ի վիրալ մորուացըս վաղ կըտուրք ի վայր անկանէին .
Սակայն հաշտ յիս ակնարկեաց , հաս պարագայց նա զհետ ամաց ,
Մինչ եթող Վալատէ , եւ զմեզ ունի Բմարիլիս .
Օ ի ցորչափ զրաւեալ ունէր զիս Վալատէ , ոչ իսկ ժըխտեմ ,

Ոչ ինձ յոյս ազատութեան , ոչ պախրէից էին խնամք .
Թէ եւ շատք ի մերմէս զոհք ի բակէ ելանէին ,
Եւ մակարդէր պանիր պարարտ վասն ապաշնորհն քաղաքի ,
Ոչ աջ ծանրաբեռն ինձ պղղենձեօք ի տուն դառնայր :

Մեղիքեռս

40 Օջարմանայի , Բմարիլեակ , հիմ կարդայիր տըխուր առ դիս ,
Ում ըզմիրգըս կախեալ զիւրեանց կողերցըն թողուիր .
Օ՛ր ի բաց կայր Տիտիր : Բզբեզ շոճիքս իսկ , Տիտիրէ ,
Նաութս իսկ ըզբեզ , եւ զբեզ աղբերքս իսկ այսօրիկ հրաւիրէին :

Տիտիրոս

Եւ զի՛նչ , Սեղբէէ , առնել էր ինձ . չէր իսկ հընար
Բլլազք ինձ մերկանալ յանձնէ ի բաց զըստըրկութիւն ,
Եւ ոչ հաշտս ընդ իս այլուր գտանել երբէք ուրեք ըզդիս .
Բնդանօր ըզպատանեակըն զայն եղեւ ինձ տեսանել ,
Ում բազինքս ամի ամի կըրկին վեցեակ ծըխեն աւուրս .
Բնդանօր նախ քան զաղերս ասաց նա ցիս . Բրածեցէք ,
50 Սանկտի , զնախիր որպէս յառաջն , եւ զեզնամոլըն լըծեցէք :

Մեղիքեռս

Ներունիդ բարեբաստիկ , մնասցեն ապա քեզ անդք քոյին ,
Եւ նոքին լայնալիրք , թէպէտ եւ մերկ ապառաժուտք
Եւ ի կնիւն տըղմաթաթաւ զարօտըս շուրջ ծածկեսցէ լիճ .
Սի ի ճարակ անընդել տուժեսցի խաշնըն սաղմնառիկ ,
Եւ մի ժանտք դրացւոյ հօտին վարակեսցեն ըզնա ախտածք :
Ներունիդ բարեբաստիկ , դու աստ ի մէջ ծանօթ գետոց ,
Դու ի մէջ սուրբ աղբերաց վայելեսցես զով հովանի .
Բստի ցանկ սահմանակից , ուրանօր շուրջ ճարակաւոր
Ի ծաղկունս ուռեստանին պարեն յաւերժ հիբլեան մեղուք ,
60 Բզբեզ մեղմ ի բըզզին յորդորեսցէ յաճախ ի նիրհ .
Երգս անտի տերեւաքաղն արկցէ հողմոց բարձր ընդ ժայռիս ,
Ոչ կերկերեալք , զորըս ինսամես , յայնժամ վայրի աղաւնիք .
Ոչ տատրակն իսկ լըռեսցէ ի յերկնաբերձ հեծել բարտույն :

Տիտիրոս

Եղջերուք ապա թեթեւք ճարակեսցին նախ ընդ եթեր ,
Սերկըս ծովք ըզճրկունս արկցեն յեզերս արտակիտեալ ,
Եւ ի բնիկ սահմանաց մոլորականք՝ Պարթեւըն նախ
Օւրարիս արբցէ նըժդէհ եւ ըզՏիգրիս Վերմանիա ,
Վան թէ բնաւ ի սըրտէս մերմէս նորայն սահեսցին դէմք :

Մեղիբեռն

- Իսկ մեք ի ծարաւուտն աստի գնասցուք կէսք յԱփրիկէ ,
- 70 Լալք ի Սկիւթըս տարադէմք եւ ի սրբնթաց կրետեանն Սվաքս ,
 Կամ ի բնաւ տիեզերաց տարաշխարհիկն ի Նրիտանէ :
 Ոչ իսկ յետ երկայն ամաց լիցի զսահմանս ինձ հայրենիս ,
 Եւ ոչ զազքատին հիւղիս գըմբէթ սիզակուտակ
 Յետ հընձոց ինչ տեսանել , զիմ պետութիւն , եւ զարմանալ :
 Օջնդաստանըս զայսոսիկ ըզմըշակեալս ի մէնջ գունակ
 Օջրակա՛նըն ժանտ կալի , խո՛ւժըն զորայքըս զայսոսիկ :
 Լհա ուր հերձուած ըզհէք քաղաքացիս զառածեցոյց ,
 Լհա ոյց ոմանց ի հունձըս զարտորայս սերմանեցաք :
 Պատկինեա արդ ըզտանձի , Սեւիբէէ , արկ զորթս ի կարգ :
 80 Երթայք , ով գեղանսիհ երբեմն իմ հօտ , երթայք՝ իմ ուլք :
 Ոչ եւս ընկողմանեալ դալարագեղ ի քարայրի ,
 Տեսից ըզձեզ ի հեռուստ ըզմնացառուտ կախեալ ժայռէ :
 Ոչ երգս արկից ի մըրմունջ , ոչ եւս յինէն դուք արածեալք
 Բզձաղկաւէտ , այծք , ըզսինձ ճարակիցիք եւ զգառն ուռի :

Տիտիբոս

Լալ դու աստ ի գիշերիս հանգիր առ իս , Սեւիբէէ ,
 Ի դալար տերեւակոյտ . են իսկ հասուն մեզ աստ խընձորք ,
 Են քընքուշ աստ շագանակք , է մեզ կաթին կիթ յորդառատ :
 Բարձրածայրք ի բացէ ահա ծըխեն գըմբէթք շինից ,
 Եւ ձըգին երկայնին ըստուերք լերանց ահա բարձանց :

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

- 6 . Իմա զարձագանգս , որ յաճախեն ի լերինս և յանտառս :
 7 . Աստուծո կողէ զՍկտաւիանոս , մինչև էր նորա զաստուածական առեալ պաշտօն :
 31 . Ալեոր զանձն իւր կեզծէ՝ որ պատանին էր , քանզի չէր մարթ սարկի առնուլ ազատութիւն առանց վաստակոց և բազմամեայ ծառայութեան :
 36 . Պախէի , այսինքն է գոյից կամ գրամոյց . այսոցիկ կրկին նշանակութեանց պախէի , այսինքն գրամոյց և անդէոյ , այն են պատճառք , զի ամենայն մեծութիւնք նախնեաց ի խաչինս էր և յանգեայս , վասն որոյ և նախկին գրամք ըստ Աստուծոյ և Սուրբայ էին կաշեայք՝ զպատկեր անդէոյ բերելով , և ըստ Պլինեայ ի պղնձի գրամս նախնիս գրողմէր գլուխ ոչխարի կամ արջառոյ :
 56 . Ծանօթ գեպոյ , այսինքն Սինկեայ և Պագոսի :
 58 . Քանզի ցանկք անջրպետէին ընդ սահմանս անգաստանաց , և ցանկք այնոքիկ կազմէին յուռեաց , յորս մեղուք սիրատարիք ծաղկանց ուռենուոյ շուրջ յածեալ հրաւիրեն ըզզանօքն բնաւորապէս ի նինջ : Իսկ հիւրէն կողէ զմեղուս , քանզի հիւրա գաւառ Սիկիլիոյ և լեառն բերէ մեղր ազնիւ :
 67 . Աստուծո գետ ի Գաղղիա , որ ի Վաւգեայ լեռնէ բոխեալ խառնի ընդ հոռոգանոս առ Լուգգոն քաղաքաւ , և հոռն ընդ նմա ի միջերկրականն ծով :
 70 . Ուլա քաղաք և գետ ի Արեւել :
 71 . Քանզի հինք տիեզերս կոչէին զցամաքն մեծ պատեալ յովկիանոսէ , վասն որոյ և զկղզիս որ ի նմա արտաքոյ տիեզերաց համարէին :
 79 . Բացադարձութիւն հեգնական առ ինքն , իբր առ սրտին զայրոյթ եպերելով զվաստակս իւր , վասն մշակելոյ իւրոյ զայդիս և զծառս ի վայելուճն բարբարոսաց :
 84 . Սիւ , Լա . Cytisus , ազգ ինչ խոտոյ կամ թփոյ , որով գիրանան խաչինք , և առատ մատուցանեն կաթն : Ի Վիթիսս կղզի , մի ի Վիւկլագայց , ասի գետալ թուփս այս , ուստի և զանուանն առեալ :